



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ**

N 932-Ա/Ք

02.11.2015թ.

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ
ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՇԵՄԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ (ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՈՎ
ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԾՐԱԳՐՈՎ) ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ
ԱՆՑՈՂԻԿ ՄԻԱՎՈՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի հմ.
1183-Ն որոշմամբ հաստատված կարգի 2.1, 2.2 և 2.4 կետերի.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու նպատակով բարձրագույն ուսումնական հաստատություններում սահմանել՝
 - 1) 2-րդ և բարձր կուրսերում ուսումնառող ուսանողների միջին որակական գնահատականի նվազագույն շեմը՝
 - ա) բակալավրի կրթական աստիճանի և ինտեգրացված ծրագրի համար՝ 40 % /ՄՈԳ/,
 - բ) մագիստրոսի կրթական աստիճանի համար՝ 50 % /ՄՈԳ/,
 - 2) 1-ին կուրսի ուսանողների համար՝
 - ա) բակալավրի կրթական աստիճանում և ինտեգրացված ծրագրով՝ 15 միավոր,
 - բ) մագիստրոսի կրթական աստիճանում՝ նախորդ ուսումնառության ընդհանուր միջին որակական գնահատականը՝ 41 % /ՄՈԳ/:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Կարինե Հարությունյանին:



ԱՐՄԵՆ ԱՆՈՏՅԱՆ